

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ՅԱ. ՏԱՐԻ - 1937

Կը խմբագրուի եւ կը հրատարակուի ՄԻՒԹԱՐԻՏԵՆ ՄԻՇԵՆՈՒԹԵՆԸ ԿՈՂՄԸՆԷ Ի ՎԻԵՆԱՍ աշխատակցութեամբ ազգային եւ օտար Բանասէրներու:

Որպէս զի աւելի մատչելի դառնայ Ուսումնաթերթս օտարալեզու արեւելագէտներուն, Խմբագրութիւնս շարունակաբար պիտի ներկայացնէ նաեւ կարեւոր քանակաւ յօդուածներուն համառօտ մէկ ամփոփումը, միջազգային որ եւ է լեզուաւ:

Բաժանորդագրին Է առեւն երկրորդ համար՝ 1 ֆրանկ ստերլինգ, կանխիկ:

Մեր հասցէն՝

REDACTION DE LA REVUE "HANDES AMSORYA," VIENNE (Autriche), VII., Mechitharistengasse 4.

ԹՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Շնորհակալութեամբ ստացած ենք հանգուցեալ նկարիչ Վարդան Մախոյիտեանի գործերէն մէկ գիւղորէք, երկու ծովանկար, զորոնք Դիտ. Մախոյիտեան հաճած է Վանքիս Թանգարանին նուիրել՝ ազնիւ միջնորդութեամբ Տիար Մ. Մատթէոսեանի:

ՄԻՒԹԱՐԻՏԵՆ ՄԻՇԵՆՈՒԹԵՆ

Վիեննայի Տիար Գեղամ Ամատոսնի՝ Ուսումնաթերթիս յիսնամեայ Յորելանին առթիւ մէկ տարուան «Հանդէս Ամսօրեայ» կը նուիրէ Մեզգոնեան Հաստատութեան, (Նիկոսիա) եւ Պարիսի Հայ Ուսանողական Միութեան:

ԽՍՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ԽՍՐԱԳՐՈՒԹԵԱՆՍ ԱՌԱՔՈՒԱԾ ԹԵՐԹԵՐ

(Շարունակութիւն):

ԱՐԵՒՒ Քաղաքական, գրական եւ տնտեսական օրաթերթ: Arev, B. P. 1060, Le Caire.

ԵՓՐԱՏ Անկախ երկօրեայ հայաթերթ ազգային, քաղաքական եւ գրական: Yeprad, B. P. 382, Alep.

ՇԱՂՎԱԶՈՐ N. Pinedjian, Poste Restante Copucines, Marseille.

ՄԵՂՈՒ Երգիծական շաբաթաթերթ: Rue Tz. Simeon 72, Sofia (Bulgarie).

ՍԱԻԱՌՆԱԿԱԶԵԲԻԻՆ Ամէնուն շաբաթաթերթ: Rue Galal, Le Caire.

ՓԱՐՈՍ Ազգային, գրական եւ հասարակական եռօրեայ հայաթերթ: Paros, B. P. 10, Plovdiv (Bulgarie).

"HANDES AMSORYA,"

MONATSSCHRIFT FÜR ARMENISCHE PHILOLOGIE

LI. JAHRGANG - 1937

Herausgegeben und redigiert von der MECHITHARISTEN - KONGREGATION IN WIEN unter Mitwirkung zahlreicher Armenisten.

Um unseren nichtarmenischen P. T. Abonnenten die Benützung unserer Zeitschrift zu erleichtern, werden wir fortlaufend von den wichtigen philologischen Abhandlungen ein kurzes Resumé in einer europäischen Sprache geben.

Preis dieses Jahrganges £ 1.—.

Unsere Adresse:

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻ 9, 10

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ

ՅԱ. ՏԱՐԻ 1937

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ, — ՅՈՐԵԼԵԱՐ 1887—1937

Կիսադարեան հասակի մէջ, ինչպէս ծառ մը հաստարուն, բարձրաբերձ եւ բազմուղէշ, կանգնած է «Հանդէս Ամսօրեայ»: Յիսուն տարիներ ծծած են անոր արմատները նիւթ երկրէն, եւ բարձրաբերձ գագաթը վայելած տաֆ համբոյրները կիզիչ Արեգակին: Ծանրաբեռն են անոր ոստերը, կը հակին երկիր: Ոչ թէ տակիքի ծանրութիւնն է կֆած գանձնաբաշտ, այլ անչափ պտղաբերութիւնը: Այգույն գարդն է այն, պարծանքը Այգետիրոջ: Այգեկութի ժամանակն է. եկած է Այգետէրը պահանջելու: Արեգակն էր ծառէն, որուն շուրջը թափած էր անչափ խնամք: Արեգակն էր վարձատրութիւնը պիտի բլլայ տարուած աշխատանքներու:

Այգեկութի է: Այսպէս կը նկատեմ «Հանդէս Ամսօրեայ»-ի 50ամեայ Յորելեանը: Արդիւնքն է 50 հատորները: Անոնք պիտի դասուին Հայ Մշակոյթի շտեմարանին մէջ. վայելքը հայ Բանասիրութեան է, ընդհանրապէս Հայագիտութեան:

Արդիւնքի գնահատութիւնը խմբագրութեանս չ'իյնար: Բայց վստահ եմք թէ Հայագիտութիւնը ինքնին պիտի կտրէ իր արդար դատաստանը այդ 50 հատորներու արժէքի մասին:

Կարելի էր անշուշտ Այգիէն աւելի մեծ արդիւնք սպասել: Բայց մեքնք նկատուի ունիմք ծառ մը միայն, համեստ կարողութեամբ եւ տարողութեամբ:

Խմբագրութիւնս կը մատուցանէ խորին երախտագիտութեամբ իւր շնորհակալութիւնը Նորին Սրբութեան Պիոս ԺԱ. սրբազան Գահանայապետին, Նորին Վսեմութեան Կարդինալ Ե. Տիարանի, Նորին Վեհութեան Տ. Սահակ Կարդիկոսին, ինչպէս նաեւ արհիպատիւ Արքեպիսկոպոսաց եւ Եպիսկոպոսաց, որոնք շնորհեցին այնքան բարեացակամօրէն իրենց խնկարոյր օրհնութիւնն եւ բարձր գնահատանքը խմբագրութեանս. դարձեալ կը յայտնէ իւր շնորհակալիքը այն ամէնուն, մասնաւորաց եւ խմբագրութեանց, որոնք հանեցան տալ իրենց գնահատութիւնը այս Յորելեանի առթիւ, հեռագրով, նամակով եւ հրապարակաւ:

ԽՍՐԱԳՐՈՒԹԻՒՆ